ՀԱՄԱՄԻՈՒԹՅՈՒՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ
ԿՈՄԻՏԵ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆԳ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի համար պատանի բնասերների, փորձարարների, մատղաշների շեֆերի յեվ գյուղատնտեսության տեխնիկների ուսխատանքի լավագույն նմուշների ընտրության, պահպանման յեվ փոխադրման կարգի մասին:

Ա II 23676

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1967 թ.

Հ. Խ. Ս. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1938

ՍՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.

ՀՐԱՀԱՆԳ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի համար պատանի բնասերների, փորձարարների, մատաղաշների շեֆերի և գյուղատնտեսության տեխնիկների աշխատանքի լավագույն նմուշների ընտրության, պահպանման և փոխադրման կարգի մասին։

1. Պատանի բնասերները, գյուղատնտեսության տեխնիկները, մատաղաշների շեֆերը և գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների մոդելավորման ու գուտարարության պատանի տեխնիկներն ու խմբակները, ինչպես նաև մանկական տեխնիկական և գյուղատնտեսական կայանները, պատանի բնասերների կայանները, գալրոցները, պիոներական ջոկատները, մանկատները, պիոների և հոկտեմբերիկների պալատների գյուղատնտեսական աշխատանքների բաժինները, կոլտնտեսային յերեխաների տները, մանկական հանգստի և կուլտուրայի պարկերը և այլն, վորոնք բույսերի և կենդանիների աճեցման փորձարարական աշխատանքներ ասպարեզում ունեն նվաճումներ և լավ արդյունքներ (ըստ բերքատվության, վաղահասունության, ցրտադիմացկունության, պահպանության, փոխադրականության, հիվանդությունների դեմ կայունության, ռեկորդային բույսերի ստացման, անասունների և թռչունների բարձր արդյունավետության, մթերատվության և այլն), ցուցահանդեսին են ներկայացնում իրենց աշխատանքների եքսպոնատները (լավագույն նմուշները)։

2. Պատանի բնասերների, փորձարարների և տեխնիկների կողմից Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին ներկայացվող եքսպոնատներ կարող են լինել։

ա) Ցերկրագործության և անասնապահության պտաղրանքի բնական նմուշները՝ պտուղներ, սերմեր, սենյակա-

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

յին, ջերմոցա-ջերմատնային և գրունտային կենդանի բույսեր, անասունների, թռչունների, ձկների, միջատների, բույսերի աչքի ընկնող եկզեմպլյարներ, վորոնց նկատմամբ կիրառվել և փորձնական աշխատանք և վորոնց ստեղծել են իրենք՝ պատանի բնասերները։

Ցերեխաների գյուտարարական և ռացիոնալիզատորական աշխատանքը գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների ընդլայնում. ինքնուրույն սարքավորում՝ ինվենտարի նմուշներ, գործող մոդելներ և այլն։

բ) Պատկերող նկարագրական և կերպարվեստային եքսպոնատներ (մոդելներ, մակետներ, գեղանկարչություն, ֆոտո, ալբոմներ, դիագրամներ, ալբոմներ, սրագրեր, նկարագրություններ ու գրավոր հաշվետվություններ և այլն), վորոնք պատկերում են և լրացնում պատանի բնասերների և գյուղատնտեսության փորձարարների փորձնական աշխատանքների ամենահետաքրքիր արդյունքները և արտադրական նվաճումները։

3. Պատանի բնասերների, գյուղատնտեսության փորձարարների, մատղաշների շեֆերի և պատանի անասնապահների նվաճումները, վորոնք թույլատրվում են Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին, պետք և բավարարեն Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի Կոմիտեյի վորոշումով նախատեսված բոլոր պահանջներին, վորպիսիք հաստատված են 1937 թվի հունիսի 14-ին ՍՍՀՄ ԺԿՍ-ի և Համ Կ(բ)Կ Կենտկոմի կողմից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Առանձին կուլտուրաների բերքի վորոշման ժամանակ նրա հաշվառումը կատարվում է վոչ պակաս 10 ք. մ տարածությունից, այնուհետև վերածելով հեկտարի։ Հատուկ արժեքավոր և հետաքրքիր տրաների և փորձերի համար՝ հաշվառման տարածությունը թույլատրվում է վերցնել 10 քառակուսի մետրից պակաս (ցորենի և տարեկանի հիբրիդների փորձերի արդյունքները, ցորենի և սիգախոտի հիբրիդները և այլն)։

4. Պատանի բնասերների և գյուղատնտեսության փորձարարների լավագույն նմուշների (եքսպոնատների) ընտրությունը, պահպանումը և փոխադրումն ամբողջովին կատարվում է Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի Կոմիտեի 1937 թվի սեպտեմբերի 14-ին հաստատված հրահանգի համաձայն, հաշվի առնելով պատանի բնասերների կողմից ներկայացված եքսպոնատների համար ստորև բերվող փոփոխությունները՝ ըստ չափի, քանակի և այլ պայմանների։

1. ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՅԵՎ ՀԱՏԻԿԱՅԻՆ-ԼՈԲԱԶԳԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ

Հացահատիկային եքսպոնատները ներկայացվում են ցուցահանդեսին հետևյալ քանակությամբ.

ա) ցորեն, տարեկան, գարի, կորեկ, հնդկացորեն, վարսակ, բրինձ—ցուցահանդեսին ներկայացվում են չկալված մեկական խուրձ՝ արմատներով, 15—20 սմ տրամագծով և 2-ական կիլոգրամ հատիկ՝ փոքրիկ տոպրակների մեջ։

բ) Յեգիպտացորենը և սորգոն ցուցահանդեսին ներկայացվում են 10-ական չկալված ցողուն՝ արմատներով և 1-ական կիլոգրամ հատիկ՝ փոքրիկ տոպրակներում։

գ) Հատիկային լոբազգիները՝ սիսեռը, լոբին, բակլան, վոսպը, վիկան, վոլոռը, ներկայացվում են 50-ական չկալված ցողուն՝ արմատներով և 1-ական կիլոգրամ հատիկ՝ փոքրիկ տոպրակների մեջ։

Բացի դրանից, հատիկային լոբազգիներից պետք է ներկայացնել 2-ական որինակ հերբարիումի բույսեր և 50-ական հատ պատիճներ՝ յուրաքանչյուր տեսակից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Նոր սորտերի հատուկ դեֆիցիտային նմուշները կարելի է ներկայացնել պակաս չափերով ու քանակությամբ, հասկավորները՝ վոչ պակաս 50 բույսից և 0,2 կիլոգրամ հատիկից։

2. ԿԵՐԱԲՈՒՅՍԵՐ

Եքսպոնատները ներկայացվում են հետևյալ ձևով, չափով և քանակով՝

ա) Չորացրած խրձիկներ՝ 3-ական քան. մեջը տարածությունից.

բ) Կերի արմատապտուղներ և պալարապտուղներ՝ վոչ պակաս 16 կիլոգրամից.

գ) Կերի դդումներ՝ 3-ական որինակ.

դ) դաշտային խոտերի, կերի ճակնդեղի, սիլոսային և բոստանային կուլտուրաների սահմանված կոնդիցիայի սերմեր՝ 0,2-ական կիլոգրամ.

ե) մարգագետնա-արոտային խոտերի և այլ արմատապտուղների սերմեր՝ 0,1-ական կիլոգրամ.

զ) բարձր վորակի սիլոս՝ հերմետիկորեն խցանված անոթների մեջ՝ 2—3-ական կիլոգրամ։

3. ԲԱՄԲԱԿ

Բամբակի թփերը ներկայացվում են 2-ական հատ, կնդուղները՝ 10-ական հատ, հումք բամբակ՝ 1-կիլոգրամ, սերմերից մաքրված բամբակ՝ 0,5 կիլոգր., սերմեր՝ (հունդ) 0,2 կիլոգրամ, հերբարիում՝ 2-ական որինակ։

4. ՎՈՒՇ

Վուշի խրձիկները պետք է ունենան առնվազն 12—15 սմ տրամագիծ. սերմերը ներկայացվում են 0,5 կիլոգրամ և մաքրված կտավհատի թելը՝ 0,5 կիլոգրամ։

5. ԿԱՆԵՓ

Կանեփի եքսպոնատները ներկայացվում են հետևյալ չափով և քանակությամբ՝

ա) կանեփի բույսերը՝ չկալսված գլխիկներով 10 սմ տրամագիծ ունեցող խրձիկներով.

բ) սերմեր՝ 0,2 կիլոգրամ։

6. ՆՈՐ ԹԵԼԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐ

Նոր թելատու բույսերը ներկայացվում են հետևյալ չափով և քանակությամբ՝

չկալսված խրձիկներ՝ 15 սմ տրամագծով, թել վինջերով՝ 15 սմ.

սերմեր՝ 0,1 կիլոգրամ։

7. ՇԱՔԱՐԻ ՃԱԿՆԴԵՂ

Շաքարի ճակնդեղի և ցիկորիայի արմատների ընտրությունը կատարվում է յերկու պարտիայով՝ 10-ական միջին և 5-ական առավելագույն քաշի արմատով յուրաքանչյուր պարտիայում։

Ճակնդեղի սերմերը պետք է ներկայացնել 0,2 կիլոգրամ քաշով։

8. ՅՈՒՂԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐ

Յուղատու բույսերը պետք է ներկայացնել հետևյալ քաշով և քանակությամբ.

Բույսերի անունները	Սերմերը (կիլոգրամով)	Բույսերն արմատներով և բույսերի մասերը
1. Արևածաղիկ	0,5	Յողունը արմատներով և գլխով՝ 5 հատ
2. Գինաքերչագ	0,5	10 վողկույզ - կտրված մոմային հասունության ժամանակ
3. Սոյա	0,5	2 խրձիկ (խրձի տրամագիծը 10 սմ)
4. Հատիկավոր վուշ	0,5	2 խուրձ
5. Մանանեխ	0,2	2 »
6. Բունջուք	0,2	2 »
7. Արախիս (գետնանուշ) պտուղներով	0,5	2 հերբարիացրած որինակ
8. Կաթի ծաղիկ	0 2	2 խուրձ
9. Գերբերա	0 2	2 »
10. Խաշխաշ	0,1	2 »
11. Սեվուկ	0,1	2 »
12. Զուբա	0,5	2 »

9. ՅԵԹԵՐԱ-ՅՈՒՂԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐ

Եքսպոնատները ներկայացվում են հետևյալ չափով և քանակությամբ.

№№ ըստ կարգի	Բույսերի անունները	Սերմերը կիլոգրամով	Բույսերն ու նրանց մասերը
1.	Համեմ, անիսոն	0,1	Հերբարիում 2 օրինակ, խրձեր՝ 50-ական ցողունից՝ արմատներով
2.	Մուսկաթային շալֆեյ	0,1	Հերբարիում 2 օրինակ. չոր-թացրած ծաղկափթթության նմուշ, 0,1 կգ.
3.	Գղպեղային անանուխ	0,1	Հերբարիում 2 օրինակ. չոր-թացրած տերևի 0,5 կգ, խրձեր արմատն.
4.	Ցերեմ, վարդ (ռոզա), լավանդա	—	Հերբարիում՝ 2 օրինակ.

10. ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐ

№№ ըստ կարգի	Բույսերի անունները	Եքսպոնատների անունը	Քանակը կիլոգրամներով
1.	Կամֆաբային բազիլիկ	ա) սերմեր վոչ պակաս 50 գրամից	—
		բ) հերբարային նմուշներ	—
		գ) խրձեր	
		դ) կապված տերևի վոչ պակաս 0,5 գր.	
		ե) թաց կամֆարա	0,05
2.	Դալմատյան ռամաշկա	ա) սերմեր	0,05
		բ) հերբարիումի նմուշներ	2 հատ
3.	Վալերիանա	ա) սերմեր՝ վոչ պակաս	0,05
		բ) հերբարիումի նմուշներ . .	2 հատ
		գ) արմատներ	0,1

№ № ըստ	Բույսերի անունները	Եքսպոնատների անունը	Քանակը (կիլոգրամներով)
4.	Անանուխ (մյատա)	ա) հերբարիումի նմուշներ՝ բոլոր սելեկցիոն սորտերից	2 հատ
		բ) տերև	0,1
5.	Խավարծիլ (ռևմեն)	ա) սերմեր վոչ պակաս	0,05
		բ) կոթեր	0, 10
		գ) հերբարիումի նմուշներ	2 հատ

11. ԾԽԱԽՈՏ ՅԵՎ ՄԱԽՈՐԿԱ

Դեղին ծխախոտների հասկերի չափը կախված է լինելու նրա բուսաբանական սորտից (մեծատերև կամ փոքրատերև), ըստ լերկարության 20 – 30 սմ և ըստ բարձրության 10 — 15 սմ։

Դեղին սիգարային ծխախոտների շարերը պետք է ներկայացնել, անկախ ծխախոտների մշակման ձևից, 2-ական հատ վերին և միջին քաղերից։ Շարերը լինելու յեն 2,0 մետր յերկարությամբ։

Փնջերը պետք է ներկայացնել 10 հատ, 1-ին և 2-րդ սորտերից՝ 5-ական փունջ։

12. ԿԱՐՏՈՖԻԼ

Կարտոֆիլի պալարներ պետք է ներկայացնել 50 հատ միջին տեսակի և 25 հատ ամենախոշորներից, վորը պիտի ընտրել բերքահավաքի ժամանակ։

13. ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ ՅԵՎ ԲՈՍՏԱՆԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ

Բանջարանոցային եքսպոնատները թարմ վիճակում ներկայացվելու յեն հետևյալ քանակությամբ.

1. Ձմերուկ, սեխ, կաբաչկի, պատիսոն 5-ական որինակ
2. Դդում . . . . . 3-ական »

3. Գլուխ կաղամբ . . . . . 5-ական որինակ
4. Ծաղկակաղամբ—բրյուսելյան, սավոյան, կոլրաբի 5-ական որինակ
5. Սեղանի յեգիպտացորեն, բաղբիջան, պղպեղ, արմատապտուղներ 20-ական որինակ
6. Լոբի, սիսեռ, բակլա կանաչ վիճակում, սալաթ, այլևայլ կանաչեղեն 1 կիլոգրամ
7. Պամիդորներ . . . . . 6 կիլոգրամ
8. Սխտոր, գլուխ սոխ և քյալիշ սոխ 1 կիլոգրամ
9. Ամսաթողկ, թարխուն, խավարծիլ, ծնեբեկ 5 փունջ
10. Վարունգ . . . . . 30 հատ

Բանջարանոցային և բոստանային կուլտուրաների վերամշակված եքսպոնատները կարող են ներկայացվել հետևյալ քանակությամբ՝

Թթու դրած վարունգ և պամիդոր	4 կգ
« » ճմերուկ	10 »
« » կաղամբ	4 »
Տոմատ-պյուրե և պաստա	1 »
Ճմերուկի-մեղր	1 »
Չորացրած սոխ	1 »
Չորացրած սիսեռ	0,5 »
Թթու դրած բանջարեղեն	1

Պատանի ընտանիքների և փորձարարների եքսպոնատները, որոնք ունեն սերմաբուծական դանդեր, պետք է ներկայացնեն հետևյալ քանակությամբ՝

Բոստանային կուլտուրաների սերմեր		1-ական	կիլոգ.
Պատիճավոր	»	» 1-ական	»
Բանջարանոցային	»	» 1-ական	»

14. ՊՏՈՒՂՆԵՐ ՑԵՎ ՀԱՏԱՊԱՏՈՒՂՆԵՐ

Յուցահանդեսին պետք է ներկայացնել հետևյալ քանակությամբ եքսպոնատներ յուրաքանչյուր սորտից՝ հնդավորներ (խնձոր, տանձ, սերկևիլ, վոչ պակաս 10-ական կիլոգրամից, կորիզավորներ (դեղձ և այլն) վոչ պակաս 2 կիլոգրամից, հատապտուղները՝ 2 կիլոգրամ։

ԸՆԿՈՒԶԱՊՏՈՒՂՆԵՐ

Թե՛ կուլտուրական և թե՛ անտառային բոլոր տեսակի և սորտի ընկուզները պետք է ներկայացնել առանց կեղեվահանելու և կեղեվահանած, առանց կճեպի՝ 1-ական կիլոգրամ յուրաքանչյուր սորտից։

Պտղատու ծառերի և հատապտուղների թփերի նոր ստացած և հայտարերված տեղական արժեքավոր սորտերի առանձին բույսերի նմուշների ընտրությունները կատարվելու յեն՝ հատապտուղների համար՝ ամբողջ թփի առաջին սորտի բերքը, պտղատու ծառերի համար տիպիկ պտուղները, վոչ պակաս 2-ական կիլոգր. հնդավորներից և 1 կիլոգրամ կորիզավորներից։

Ամեն տեսակի չորացրած մրգերը ներկայացվելու յեն փոքրիկ արկղների մեջ՝ վոչ պակաս 0,5 կիլոգրամից։

Հյութերը պիտի ներկայացնել ապակյա շշերի մեջ (հերմետիկորեն խցանված) 1 լիտրից վոչ պակաս քանակությամբ։

Մուրաբաները ներկայացվելու յեն ապակյա ստանդարտ անոթների մեջ 1 կիլոգրամ քանակով։

ՊԱՏՎԱՍՏԱԿԱԼՆԵՐ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹ

Տնկարանից պատվաստակալներ և տնկանյութ պիտի ներկայացնել հետևյալ քանակությամբ՝

ա. պատվաստակալներ . . . . 10-ական որինակ
բ. տնկանյութ . . . . . 5-ական որինակ

15. ԹԱՂՈՂ

Թարմ խաղողը պետք է ներկայացնել յուրաքանչյուր սորտից 2-ական կգ։

Վերամշակման արդյունքները ներկայացվելու յեն 1 կգ չափով։

16. ԹԹԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Բոժոժների եքսպոնատները ներկայացվելու են 0,3 կգ չափով։

17. ԿԱՈՒՉՈՒԿԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐ (ԿՈԿ-ՍԱԳԻԶ ՅԵՎ ԱՅԼՆ)

Կոկ-սագզի և մյուսների արմատների ընտրությունը կատարվում է 2 պսրտիայով, յուրաքանչյուրը 2 կիլոգրամից։

18. ՄԵՐՁԱՐԵՎԱԴԱՐՁԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ

Բացի գրունտային բույսերից, ներկայացվում են նաև ջերմոցային, սենյակային-տակառային կուլտուրաներ։

19. ԳԱՅԼՈՒԿ (ԽՄԵՅԼ)

Վորպես եքսպոնատներ կարելի է ներկայացնել գայլուկի արտադրանքի նմուշները (գայլուկի կոները) 0,3 կգ յուրաքանչյուրից։

20. ԾԱՂԿԱ-ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ

Ցուցահանդեսին կարելի է ներկայացնել բոլոր տեսակի և սորտերի ծաղիկներ ու դեկորատիվ բույսեր.

ա. բաց գրունտային բույսեր,

բ. փակ գրունտային բույսեր,

գ. կտրած ծաղիկներ,

դ. կենդանի ծաղիկներից պատրաստած գեղարվեստական գործվածքներ։

ԲԱՆՋ ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐ

ա. Միամյակները ընդունվում են ծաղկամանների մեջ, վորպես լավ եռված սածիլներ, վորոնք պիտանի են հողի մեջ տնկելու համար.

բ. յերկամյակները՝ կամ հողից հանած լավ հողագնդի հետ, կամ վորպես լավ զարգացած սածիլ, վոր անպայման ապահովելու է բույսի ծաղկումը տնկելու առաջին տարում.

գ. բաղմամյա բույսեր, կամ հողից (դրունտից) հանած մեծ թփեր՝ հողի մեծ քանակությամբ (վերատնկման ազդեցությունը կանխելու համար), կամ անոթի մեջ, ապակուտակ լավ աճեցրած բույսեր.

դ. ձեվավոր դեկորատիվ բույսեր և թփեր ընդունվում են նախապես լավ արմատակալեցրած՝ կիսատակառների կամ արկղների մեջ, վորոնք նախապատրաստած են դրունտում տնկելու համար։

Յուցահանդեսի համար ընդունված բաց դրունտի բույսերը պետք է համապատասխանեն հետևյալ պահանջին. ցուցադրվող բույսերի ծաղկման ժամանակը պետք է հանդիսանա ամռան յերկրորդ կեսը (ոգոստոս-սեպտեմբեր)։

Բույսերի (ըստ առանձին տեսակների) ներկայացման ժամկետները վորոշվում են առանձին որացուցային պլանով, վորի մասին նախորոք հայտնվում է եքսպոնենտներին։

ՆՆԴԻԱՆԻ ԾԱՂԻԿՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԴԵԿՈՐԱՏԻՎ ՊՈՐԾՎԱԾՔՆԵՐ

Ծաղկեփնջերը, կողովները և կենդանի ծաղիկներից ու բույսերից պատրաստված այլ տեսակի դեկորատիվ գործվածքները ներկայացվելու յեն այն քանակով և տեսքով, ինչպես վոր նրանք պատրաստվել են եքսպոնենտի կողմից։

Ծաղիկների և դեկորատիվ բույսերի եքսպոնատները պետք է ներկայացնել լավ գարգացած, ըստ մեծության, գույնի ու ձևի միատեսակ, առանձին-առանձին սորտերով։

21. ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Քամած մեղրը պետք է ներկայացնել ցուցահանդեսին 1 կիլոգրամ տարողությամբ ապակյա բանկաների մեջ, 2-ական հատ յուրաքանչյուր սորտից։

22. ՄԱՏՂԱՇՆԵՐԻ ՊԱՏԱՆԻ ՇԵՖԵՐԻ ՅԵՎ ԱՆԱՍՆԱՊԱՀՆԵՐԻ ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԸ

1. Մատղաշների և մանր անասնապահության պա-

տանի շեֆերի եքսպոնատներն ընտրվելու յեն հետևյալ հասակում. հոբիները վոչ պակաս 6 ամսականից, գոճիները՝ 4 ամսականից, դառները, ուլերը՝ 3 ամսականից, շները՝ 5 ամսականից, դաղանները՝ 2 ամսականից։

2. Խոշոր յեղջյուրավոր անասունները՝ ձիերը, ուղտերը, յեղջերուները, ավանակները և ջորիները կարելի յե թույլատրել ցուցահանդես վորպես յերեխաների եքսպոնատներ միմիայն բացառիկ դեպքերում և ցուցահանդեսային Կոմիտեյի հատուկ թույլտվությամբ։

3. Մատղաշների պատանի շեֆերի և անասնապահների եքսպոնատների (անասունների) ընտրությունը և դոկումենտացիան կատարվելու յե համաձայն Համ. գյուղատնտեսական ցուցահանդեսի Կոմիտեյի հրահանգի այն մասի ոգտագործումով, վոր վերաբերում է մատղաշներին, ճագարներին, թռչուններին, փափկամազ դաղաններին և շներին։

23. ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ, ԴՈԿՈՒՄԵՆՏԱՑԻԱՆ ՅԵՎ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ՄՈՍԿՎԱ ՔԱՂԱՔԸ

1. Եքսպոնատները, վորպես կանոն, պահպանվում են անմիջականորեն պատանի ընտերների ու մանկական տեխնիկական ու գյուղատնտեսական կայաններում, դպրոցներում և առանձին պատանի ընտերների և փորձարարների մոտ, մինչև ցուցահանդեսի Կոմիտեյից հատուկ ցուցումները սատանալը Մոսկվա ուղարկելու մասին։

2. Եքսպոնատների պահպանման պատասխանատվությունը կրում են կայանների դեկավարները, դպրոցների դիրեկտորները և այլն։

3. Մարզային, յերկրային հողային վարչությունները և հանրապետական հողժողկոմատները ցուցահանդեսին պատրաստվող մասնակիցների համար կազմակերպում են անհրաժեշտ ոգնություն եքսպոնատները պահպանելու գործում։

4. Պատանի բնասերների և փորձարարների եքսպոնատների ընտրությունը, դոկումենտացիան (ապրոպատպորտների կազմումը, ցանքերի ապրորացիան, սերմերի անալիզը և այլն), փաթեթման և պահպանման առթիվ կոնսուլտացիան պարտավոր են կատարել շրջանային հողաժիններին, փորձակայաններին, գիտա-հետազոտական հիմնարկների, ՄԿՏ-ների և խրճիթ-լաբորատորիաների մասնագետները։

24. ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՊԱՏԱՆԻ ԲՆԱՍԵՐՆԵՐԻ ՅԵՎ ԴՅՈՒՂԱՏՆՏ. ՓՈՐՁԱՐԱՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Ցուցահանդեսին մասնակցել ցանկացողները գրավոր կարգով դիմումներ են տալիս (կամեցած ձևով) յերկրային, մարզային և հանրապետական ժողկրթության բաժիններին հետևյալ կարգով.

ա. Առանձին պիոներները և դպրոցականները, մանկատան սանները, պատանի բնասերները և գյուղատնտես. փորձարարները, մատղաշների շեֆերը, գյուղատնտեսական մեքենաների պատանի տեխնիկները և նրանց խմբակները դիմումները տալիս են իրենց դիրեկտորների և վարիչների միջոցով։

բ. Յեթե նրանց փորձարարական աշխատանքը կատարվում է մանկական գյուղատնտեսական և տեխնիկական կայաններում, պատանի բնասերների կայաններում, պիոներների և հոկտեմբերիկների պալատներում և տներում, կոլտնտեսային յերեխաների տներում, մանկական հանգստի և կուլտուրայի պարկերում, այդ դեպքում դիմումները տրվում են այն հիմնարկների դիրեկտորների և վարիչների միջոցով, ուր կատարվում են փորձարարական աշխատանքները։

2. Ցուցահանդեսին մասնակցելու համար տրվող դիմումի մեջ անհրաժեշտ է ցույց տալ.

ա. ազգանունը, անունը, հայրանունը և մանրամասն փոստային հասցեն,

բ. ինչ ներկայացնելու ցուցահանդեսին,

գ. ինչումն են կայանում այն նվաճումները, որոնք վերաբերում են այդ եքսպոնատներին։

3. Մանկական դյուղատնտեսական և տեխնիկական կայանների պատանի բնատերների կայանների, դպրոցների և այլ մանկական հիմնարկների դիրեկտորները, իրենց դլխավորած հիմնարկների մասնակցելու ցանկության մասին տրվող դիմումներից բացի, պարտավոր են կցել վերջինիս նաև տվյալ հիմնարկի աշխատանքների դրությունը բոլոր դծերով բնութագրող համառոտ նկարագիր։

4. Յուցահանդեսին մասնակցելու մասին դիմումներ տալու վերջնական ժամկետները սահմանվում են հետևյալ կերպ.

ա. 1937 թ. աշխատանքների արդյունքների համար վոչ ուշ քան 1938 թ. հունվարի 1-ը.

բ. 1938 թ. աշխատանքների արդյունքների համար վոչ ուշ քան 1938 թվի հուլիսի 1-ը։

5. Դիմումներն սահմանուց պետք է կատարել նրանց ստուգումը։ Դիմումների ստուգումները կատարում են ժողկրթության բաժինները հողորդանների հետ միասին, որոնք դրա համար առանձնացնում են իրենց ներկայացուցիչներին։

6. Ստուգված նյութերի հիման վրա, հանձնաժողովը՝ կազմված ժողկրթության բաժնի, ԼԿՅԵՄ շրջկոմի և հողորդանների ներկայացուցիչներից, կատարում են յուցահանդեսին մասնակցողների ընտրությունը։

7. Հանրապետական, յերկրային և մարզային յուցահանդեսային կոմիտեների կողմից ընտրված մասնակիցների յուցակը պետք է ներկայացնել Համամիութենական դյուղատնտեսական յուցահանդեսի Կոմիտեին վերջնական հաստատման համար ընդհանուր կարգով, որը սահմանված է Համամիութենական դյուղատնտեսական յուցահանդեսի մասնակիցների ընտրության կարգի մասին յեղած հատուկ հրահանգով։

8. Մասնակիցների (կիբեխների) վերջնական ընտրությունը և հաստատումը դրվում է Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի Կոմիտեին կից ընտրող հանձնաժողովի վրա, կազմված ԼԿՑԵՄ կենտկոմի, Լուսժողկոմատի ներկայացուցիչներից և ցուցահանդեսի պատասխանատուների կայանի դիրեկտորից։

9. Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի Կոմիտեի կողմից հաստատված յուրաքանչյուր մասնակցին հաղորդում է ուղարկվում, ուր հայտնվում է ցուցահանդեսին նրա մասնակցության հաստատման, եքսպոնատները ցուցահանդես ուղարկելու ժամկետի և այն պավիլիոնի անվան մասին, որտեղ ենթադրվում է նրա եքսպոնատի ցուցադրումը։

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ա 23676 II

ՀՍՍՌ ԳԻՏ. Հ. ԵՐԻՏ. ՆՇՄԴ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐՈՒՂԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

Արտադպրոցական կաբինետի թարգմանություն
Խմբագիր՝ Ս. Ոհանյան
Լեզվ. խմբագիր՝ Հարություն
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչ՝ Խ. Այվազյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Վ. Ավագյան
Գլավլիտ Ղ—5529
Հրատ. 4456, պատվեր 118, տիրաժ 5000
Հանձնված է արտադրության 1938 թ. հունվարի 25-ին
Ստորագրված է տպագրության 1938 թ. փետրվարի 9-ին
Թուղթը 62×94 1 1/8 տպ. մամ., հեղին.՝ 1 1/4 մամ.,
1 թերթ. 30720 տպ. նիշ։

Պետհրատի 2-րդ տպարան, Ցերեվան, Նալբանդյան 11

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0003215

65

[054.]

II
А 23676

Комитет Всесоюзной сельскохозяйственной выставки

УПРАВЛЕНИЕ ОРГАНИЗАЦИИ ВЫСТАВКИ

Инструкция

о порядке отбора лучших образцов работы юнатов на Всесоюзную сельскохозяйственную выставку

Подготовлен к печати ВНЕШКОЛЬНЫМ КАБИНЕТОМ Наркомпроса Арм. ССР.

Гиз. Арм. ССР, Ереван, 1933 г.

Пров. 1940 г.

Пров.